ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՆՔՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՄՈՏ ԵՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ. ԼԻՊԱՐԻՏ ՍԻՄՈՆՅԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

24.10.2016 10:38

Պատերազմն ունի իր օրենքները. կռվի դաշտում, ինչպես և օրենքի առաջ հավասար են բոլորը՝ անկախ մասնագիտությունից, անցած ուղուց... **Yerkir.am-ը** սկսում է նոր՝ «Պատերազմն ու օրենքի պաշտպանները» հարցազրույցների շարքը՝ նվիրված Հայաստանի անկախության ու Հայոց բանակի կազմավորման 25-ամյակին: Մեր զրուցակիցներն օրենքի պաշտպաններ են՝ իրավաբաններ, ովքեր իրենց ավանդն ունեն Արցախյան ազատամարտում:

Մեր առաջին զրուցակիցը փաստաբան, Արցախյան ազատամարտի մասնակից Լիպարիտ Սիմոնյանն է:

Ծնվել է 1972-ին Սպիտակի շրջանի Նալբանդ գյուղում: 1992թ. ծառայել է Ստեփանավանի հատուկ նշանակության գնդում, մասնակցել Քարվաճառի, Զանգելանի, Հորադիզի, Ֆիզուլիի ազատագրմանը: ՀՀ փաստաբանների պալատի անդամ է:

-Իրավաբա՞ն էիք, երբ պատերազմը սկսվեց:

-1992թ. դեկտեմբերին ծառայության անցա Ստեփանավանի հատուկ նշանակության գնդում: Այն ժամանակ 20 տարեկան էի, սովորում էի Հայկական բաց հալասարանի իրավաբանական ֆակուլտետի երկրորդ կուրսում: Ուսանող էի, երբ մեկնեցի ռազմաճակատ: Արցախից վերադառնալուց հետո շարունակեցի կրթությունս, հետո որոշ ժամանակ զբաղվել եմ դիվանագիտական գործունեությամբ, ապա՝ փաստաբանական:

-Ե՞րբ առաջին անգամ զգացիք պատերազմի շունչը:

-1993թ. մարտին առաջին անգամ մարտական առաջադրանք ստացանք և մեկնեցինք Քարվաճառ: Պատերազմ ասվածն առաջին անգամ այդտեղ տեսա: Այդ ժամանակ Քարվաճառը գրեթե դատարկված էր, միայն ֆիդայիներ էին, բայց դա ընդամենը սկիզբն էր այն ամենի, ինչ մեզ հետո սպասվում էր: Այնուհետև մեկնեցինք հարավ, մասնակցեցինք Զանգելանի ազատագրմանը, հետո՝ Հորադիզ, Ֆիզուլի... 1994թ. մարտի 4-ին Ֆիզուլիում մարտերի ժամանակ երկու ձեռքից վիրավորվեցի:

-Պատերազմի օրենքներն այլ են, ո՞րն է ամենակարևորը, որ պետք է մարտի դաշտում կատարի զինվորը:

-Իմ կարծիքով՝ պատերազմի օրենքներն ավելի մոտ են բարոյականությանը, համենայն դեպս՝ ավելի ճշգրիտ ու հստակ են: Խրամատում սպա, թե՝ զինվոր՝ հավասար մարդիկ են: Մերոնցից որևէ մեկը վիրավոր հակառակորդին չէր վնասի, դա փաստ է, շատ են եղել դեպքեր, երբ անգամ վիրավոր հակառակորդին բուժօգնություն ենք ցույց տվել: Ընդունված չէր գերուն ծեծել: Բայց այս օրենքները հակառակորդի համար չէին, պատմությունն էլ է ցույց տվել, որ նրանք մշտապես ստորություններ են դիմում. ապրիլյան պատերազմի խոշտանգումները վառ ապացույցն են:

-Կա՞ պատերազմական դրվագ, որը մինչ օրս «հետապնդում է» Ձեզ:

-Մարտական ընկերոջս՝ Արշակի զոհվելը... Զանգելանի ազատագրման ժամանակ գիշերը, երբ սպասում էինք հակահարձակման, հակառակորդը սկսեց արկակոծել: Արշակը գնաց իր խրամատը, իսկ առավոտյան նրան գտանք զոհված:

- Պատերազմի տարիներին ստիպված եղե՞լ եք մեկ ուրիշին կամ ինքներդ ձեզ օրենքով պաշտպանել:

-Կռվի տարիներն էին, մի անգամ Մեղրիից եկել էինք Երևան, որ

ուղեկցեինք պաշտպանության նախարարությունից Ղարաբաղ զենք մատակարարող մեքենան: Այդ տարիներին Մեղրիում, Կապանում և Արցախին մոտ մյուս բնակավայրերում սովորական երևույթ էր զենքով շրջելը: Ես էլ մտածում էի, որ Երևանում էլ է դա սովորական: Սարի թաղում էի բնակվում, զենքով գնացել էի տուն, հետո՝ նույն զենքով, Սարի թաղի ավոտբուսը նստած, իջա «Ռոսիա» տոնավաճառ: Այստեղ ռազմական ոստիկանությունից եկան, որ ինձ տեղափոխեն ոստիկանություն: Ես էլ սկսեցի իմ իրավունքները բացատրել, փորձում էի հիմավորել, թե ինչո՞ւ եմ զենքով և ուր եմ գնում: Ասել է թե՝ առաջին անգամ պաշտպանում էի իմ իրավունքները, թեև Երևանում զենքով շրջելու իրավունք չունեի:

-Կա՞ր մի սկզբունք կամ ինքներդ ձեզ համար սահմանած օրենք, որով առաջնորդվել եք այդ տարիներին:

-Պատարեզմի ժամանակ միշտ մտածել եմ, որ այն տղաներով, որոնց հետ մարտի գնանք, նույն կազմով հետ գանք: Ճիշտ է, բոլորս էլ գիտեինք, որ դա անհնար է, բայց այդպես էինք տրամադրում մեզ:

-Ո՞րն է Ձեզ համար խաղաղության գինը:

-Այսօր մենք պետք է վստահ լինենք, որ այն տղաները, ովքեր զոհվել են խաղաղության համար, պետք է ապրեն արժանապատիվ երկրում: Ապրիլյան պատերազմն էլ ցույց տվեց, որ մեր տղաները՝ 18 տարեկան, թե՝ ավելի մեծ, միշտ էլ պատրաստ են իրենց հայրենիքը պաշտպանել, պարզապես այդ տղաներին պետությունը չպետք է մոռանա, պետք է նրանց արժանվույնս գնահատենք:

-Փաստաբանական գործունեության ընթացքում հաճա՞խ եք զինծառայողների շահեր ներկայացնում:

-Այո, շատ գործեր են եղել: Զինվորների շահերը պաշտպանելիս ոգևորությունս ավելի մեծ է, այսպես ասած՝ մոտս նոստալգիա է սկսվում (ժպտում է), նրանց հետ մի պահ ես էլ իմ անցածն եմ հիշում: Բայց, անկեղծ ասած, մեր գործող օրենքները՝ զինվորական հանցագործությունների առումով, առավել խիստ են, քան սովորական քաղաքացիների նկատմամբ:

-Այսինքն՝ զինվորական հանցագործությունների համար նախատեսված պատիժների խստությունն արդարացվա՞ծ չէ:

-Իմ կարծիքով՝ զինվորական ծառայության ընթացքում տեղի ունեցող «թեթև» հանցագործությունների համար ոչ թե պետք է զինվորին խիստ պատժել, այլ ընդամենը հարկավոր է զինվորին պարապ չթողնել: Զինվորները, մանավանդ՝ հասակակիցները, տարբեր բնավորություններ ունեն, և երբ նրանք պարապ են մնում, միջանձնային հարաբերությունները կարող են սրվել, լարվել, և դրա համար նրանց խիստ պատժելն ամենևին էլ լավագույն միջոցը չէ:

-Ասում են՝ բանակը տղամարդու կայացման կարևոր դպրոցներից է, համամի՞տ եք:

-Իհարկե, իմ որդին էլ մեծանա, անպայման ծառայելու է, որովհետև բանակում է զինվորն անհատականություն դառնում, այնտեղ ո'չ հայր կա, ո'չ մայր, ո'չ էլ, առավել ևս, թաղի տղա, անտեղ զինվորը կարողանում է, որպես մարդ, ինքնուրույն որոշումներ կայացնել, կյանքի տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել:

Զրուցեց Թագուհի ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })